Երևանի Լ. Միրիջանյանի անվան

N 155 հիմնական դպրոց

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ինտեգրված դասերի կազմակերպումը որպես

սովորողների մոտիվացիայի բարձրացման միջոց

Կատարող՝ Քնարիկ Գասպարյան

Ղեկավար՝ Մանուշակ Պետրոսյան

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…… 3

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ……----------……..… 5

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ…… 9

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ …… 10

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԻ ԴԵՐՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ…… 13

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ԴԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ…… 15

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ՊԼԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ… 16

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…… 18

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ …… 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսօր, երբ ուսուցիչը չի հանդիսանում ինֆորմացիայի միակ աղբյուր, երբ սովորողը կարող է իրեն հետաքրքրող ցանկացած նյութ գտնել համացանցից և այլ աղբյուրներից, ուսուցչի առաջ ծառանում է գերխնդիր՝ ինչպես կազմակերպել հետաքրքիր, բազմաբովանդակ, մոտիվացնող դաս:

Այսօրվա դպրոցում ուսուցումը կազմակերպվում է առանձին առարկաներից ծրագրային գիտելիքների հաղորդման եղանակով, ինչը առանձին առարկաներից տրվող գիտելիքների ամբողջություն չէ, հետևաբար աշխարհի մասին տալիս է մասնատված, ոչ ամբողջական պատկերացում: Ուսուցման ավանդական այս ձևը արդի սովորողի ու դպրոցի համար այնքան էլ արդյունավետ չէ, և իբրև խնդրի լուծման ելք՝ առաջադրվում է ինտեգրված ուսուցումը, որը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթի ընկալմանը, գիտակցմանն ու յուրացմանը: Ինտեգրումը լատիներեն բառ է, որը թարգմանաբար նշանակում է վերականգնում, համալրում, մասերի միավորում մեկ ամբողջի մեջ (integer-ամբողջ) ոչ թե մեխանիկորեն, այլ փոխադարձ ներթափանցմամբ: Ինտեգրված ուսուցման ծրագրերը կազմվում են այնպես, որ մի առարկայից գիտելիքները հիմնվում են մեկ այլ կամ մի քանի այլ առարկաներից վերցրած գիտելիքների վրա: Սակայն ինտեգրումը տարբեր առարկաներից գիտելիքների տարանջատված միավորում չէ, այլ սերտորեն փոխկապակցված ամբողջություն:

Ինտեգրված դասերի հիմքում ընկած է միջառարկայական կապը, որի կարևորության մասին խոսել է գիտական մանկավարժության հիմնադիր Յա. Ա. Կոմենսկին: Իր «Մեծ դիդակտիկա» աշխատությունում նա նշում է, որ առարկաների միջև եղած կապը երեխաներին սովորեցնում է բացահայտել, ուսումնասիրել աշխարհը և նրա բազմազան երևույթները և, որ ամենակարևորն է, կապ ստեղծել այդ ամենի միջև: Սա բացատրվում է նրանով, որ երբ ուսուցումը կատարվում է կապերի միջոցով, փոխկապակցվածությունը հնարավորություն է տալիս վեր հանել պատճառները, ցույց

տալ, թե ինչու դա այլ կերպ լինել չի կարող (Արշակյան 2014:293)։ Միավորված ծրագրերը կառուցվում են այնպես, որ մի ոլորտի գիտելիքները հիմնվում են մեկ այլ ոլորտից ձեռք բերված գիտելիքների վրա։ Այս մոտեցումը ենթադրում է համալիր պլանավորում, գիտելիքների, փաստերի, գաղափարների ու երևույթների սահմանում և իմաստավորում տարբեր բնագավառներից, ինչպես նաև դրանց գնահատում, ինչը խթանիչ է սովորողների ճանաչողական և ստեղծագործական գործունեության համար։ Այսպիսով, աշակերտի մոտ զարգանում են ճանաչողական գործունեությունը և քննական մտածողությունը, ձևավորվում է ստեղծագործական միտքը, որի արդյունքում վերջինս կկարողանա տարբեր բնագավառների գիտելիքները համախմբել, ինտեգրել մեկ հարցի շուրջ ու լուծել այն։ Այլ կերպ ասած, ինտեգրված դասը միասնական մոտեցում է ցուցաբերում երևույթների ընկալմանը, գիտակցմանն ու ըմբռմանը։

ԻՆՏԵԳՐՎԱԾ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՆ

70-80-ական թվականներին ի հայտ եկան միջառարկայական կապերի և ուսուցման գործընթացում դրանց գործնական կիրառության յուրահատուկ դրսևորումներ՝ դասերի նոր տիպեր, մասնավորապես՝ ինտեգրված դասեր, որոնք այլ կերպ կոչվեցին բինար, սինթետիկ, համատեղ դասեր: Ինտեգրված դասը դասի հատուկ տեսակ է, որն իր մեջ ներառում, միավորում է մեկ հասկացության ուսուցման ժամանակ մի քանի առարկաների միաժամանակյա ուսուցումը:

Ինտեգրված դասը ժամանակակից մեթոդիկայի նորույթներից մեկն է: Ինտեգրված դասի միջոցով արտահայտվում են միջառարկայական կապերը: Այն կարելի է անցկացնել տարբեր առարկաներից: Ինտեգրված դասերը միավորում են տարբեր առարկաների մասնագետների ուժերը և ստեղծում միջառարկայական կապերով հարուստ դասերի օրինակներ: Իհարկե, ինտեգրված դասերը բազմակողմանի գիտելիքներ են ապահովում, հետաքրքիր ու բովանդակալից են դարձնում ուսումնական գործընթացը:

Աշակերտների արձագանքը ինտեգրված ուսումնական ծրագրերին շատ դրական է: Նրանք շատ են ոգևորվում իրենց ուսումնառությամբ, ընդ որում՝ թե՛ ուսուցիչները և թե՛ սովորողները արդեն իրենց ուշադրության կիզակետում պահում են երեք տարբեր թիրախ-նպատակներ՝ ուսուցման բովանդակություն, հասարակության մեջ շփվելու հմտությունների ձեռքբերում և հետաքրքիր գործունեություն կազմակերպելու կարողություն (Դավթյան 2007:58-59): Ինտեգրված դասերը լավ է նկարագրել Ե. Երեմինան՝ գրելով, որ ինտեգրված դասերի շնորհիվ միավորվում են մեկ թեմային նվիրված տարբեր առարկաներից գիտելիքների բլոկները: Ուստի շատ կարևոր է ճիշտ որոշել ինտեգրված դասի գլխավոր նպատակը (Еремина 2012:3): Ուսումնառության ընթացքում աշակերտների աշխատանքի արդյունավետությունը փաստում են մի շարք այլ հանգամանքներ: Աշակերտը կիսում է պատասխանատվություն ուսուցչի հետ,

քանի որ ինֆորմացիայի միակ աղբյուրը այլևս ուսուցիչը չէ։ Ինտեգրված դասերը հզոր խթան են հանդիսանում վերլուծելու, համեմատելու, որոնելու օբյեկտների ու երևույթների միջև կապը։ Դասը չի դիտվում աշակերտների կողմից սոսկ որպես երևույթ, որը պետք է անգիր սովորել։ Ավանդական դասի կառույցի շարունակական կիրառումը կարող է առաջացնել հոգնածություն և ձանձրույթ։ Ինտեգրված դասի դեպքում դրանք վերանում են, դասը խթանում է հետաքրքրություն և աշխուժություն։

Ընդ որում՝ ուսումնական նյութը պետք է լինի մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասանի սահմանային ծավալին։ Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում։

Ինտեգրված դասերը հաճախ համագործակցային, հետազոտական, ստեղծագործական են և ուղեկցվում են բացահայտումներով։ Ինտեգրված դասերը աշակերտին տալիս են բավականին լայն և վառ պատկերացումներ այն աշխարհի մասին, որտեղ նա ապրում է։ Ինտեգրումը ուսուցչին ինքնահաստատման և ինքնաարտահայտման հնարավորություն է տալիս, որն էլ իր հերթին օգնում է աշակերտների ունակությունների բացահայտմանը, քննական մտածողության զարգացմանը (Коноваленко 2014:2)։

Ուսումնական ծրագրի ինտեգրման գործընթացին բնորոշ է 4 հիմնական գիծ.

1. Աշակերտները և ուսուցիչները համատեղ պլանավորում են ուսումնական ծրագիրը և դրա իրագործման կարգը։

2. Ուսումնառության հիմքը թեմաներն են։

3. Ուսումնառությունն ընթանում է դպրոցական համայնքում ժողովրդավարական սկզբունքով։

4. Ուսումանական ծրագիրն այլևս կազմված չէ առանձին առարկաներից (Դավթյան 2007:58-59)։

Ժամանակակից մանկավարժական գրականության մեջ տարբերակվում են ինտեգրված ծրագրերի հետևյալ տեսակները.

● միջառարկայական (interdisciplinary),

● բազմառարկայական (multidisciplinary),

● անդրառարկայական (trans disciplinary)

Ինտեգրված դասի ժամանակ որպես միավորող առանցք՝ հաճախ հանդես է գալիս որևէ թեմա, որն ընգրկում է մի քանի առարկա:: Այսպիսի դասի ընթացքում միշտ առանձնացվում է առաջատար առարկան, որը հանդես է գալիս որպես ինտեգրիչ և օգնող՝ նպաստելով նյութի խորացմանը, ընդլայնմանն ու հստակեցմանը: Ինտեգրված դասերը կարող են միավորել ինչպես տարբեր առարկաներն իրենց ամբողջ ծավալով, այնպես էլ առանձին առարկաների բաղադրիչներ ու մեթոդներ: Օրինակ՝ կարելի է ինտեգրել առարկաների բովանդակությունը՝ պահպանելով առաջատար առարկայի ուսուցման մեթոդները, ինչպես նաև կարելի է ինտեգրել տարբեր առարկաների ուսուցման մեթոդիկաները՝ պահպանելով մեկ առարկայի բովանդակությունը: Սակայն, ցավոք, ինտեգրված դասեր ուսուցիչներն այդքան էլ հաճախ չեն կիրառում: Դրանք հիմնականում կիրառվում են հետևյալ դեպքերում.

1. Երբ հայտնաբերվում են միևնույն նյութի կրկնությունը տարբեր ուսումնական առարկաներում և դասագրքերում

2. Թեմայի ուսումնասիրության ժամանակի խնայողության դեպքում՝ ցանկանալով օգտվել մեկից ավելի առարկաների պատրաստի բովանդակությունից

3. Այնպիսի ընդհանրացված հասկացությունների (շարժում, ժամանակ, զարգացում, մեծություն և այլն), օրենքների, սկզբունքների ուսումնասիրության ժամանակ, որոնք ներառում են մարդկային կյանքի և գործունեության ամենատարբեր ասպեկտներ

4. Երբ ուսումնասիրվող նյութը դուրս է գալիս ուսուցանվող առարկայի ծրագրի շրջանակներից

5. Առարկայի դասավանդման ժամանակ պրոբլեմադիր և զարգացնող ուսուցում իրականացնելու ժամանակ ։

Իհարկե, կան նաև ինտեգրված դասերի կիրառման այլ դրդապատճառներ:

Միջնակարգ կրթության ժամանակակից կողմնորոշումը սերտորեն կապված է համակարգչային և ժամանակից տեխնոլոգիաներին: Այնպես որ, դասերը, միանշանակ, ինտեգրված են համակարգչային գիտությանը, որով ամրապնդում են նոր գիտելիքները անհատական համակարգչային ուսուցման համար: Ժամանակակից սովորողները մեծ հաճույքով են աշխատում համակարգչով, որն էլ դասը դարձնում է ավելի հետաքրքրաշարժ: Արդյունավետ դասերը նաև լեզվական կողմնորոշում են, որոնք սովորաբար ունեն համեմատական բնույթ, օրինակ, որոշակի առումով, հայերենի քերականություն և օտար լեզու:

Այսօր մանկավարժությունը հակված է մտածելու, որ նմանատիպ դասերը սովորողի՝ մարդկային դրսևորման հիմք կարող են հանդիսանալ: Այն նպատակ ունի նաև ուսուցչին օգնել հարմարվելու վառ, աշխույժ, անհատական հետաքրքրություններով լի սովորողին, մի կողմից էլ՝ շատ է օգնում նախագծերով աշխատող ուսուցիչներին

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինտեգրված ուսուցման մեջ կարելի է նշել հետևյալ առանձնահատկությունները

• զարգացնում է երեխաների վերաբերմունքը, հմտությունները և գիտելիքները

• կապեր է հաստատում ուսումնական ծրագրի բոլոր առարկաների միջև,

• կազմակերպվում են այնպիսի դասեր, որոնք նախաձեռնված և ուղղորդված են թե՛ ուսուցիչների և թե՛ երեխաների կողմից

• ստեղծվում է աշակերտների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացման համար համապատասխան միջավայր

• համադրվում են առարկաները

• օգտագործվում են նախագծեր ուսումնառության ընթացքում

• խրախուսվում ենլ բացի դասագրքից այլ աղբյուրների օգտագործումը

• կապեր են հաստատվում տարբեր հասկացությունների միջև

• ստեղծվում են ուսանողական «ճկուն» խմբեր

• տրվում է ինքնագնահատման և փոխադարձ գնահատման հնարավորություն (Kelly 2001:553-554): •

Ըստ Կ. Մերիլինի՝ ուսումնական ծրագրի ինտեգրումն իրականացվում է՝

• թեմաների օգտագործմամբ,

• նախագծերի օգտագործմամբ,

• անհատական և փոքր խմբային ուսումնասիրությունների կիրառմամբ:

Ինտեգրված դասերի բովանդակությունը կարող է ներառել (Stables 2010:2)՝

• ընդհանուր գաղափար,

• ընդհանուր հայեցակարգ,

• ընդհանուր տարաբնույթ կարգապահական խնդիր:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Մինչ ինտեգրված դաս անցկացնելը ուսուցիչը նախ դիմում է իր այն կոլեգային /կոլեգաներին/, ում դասավանդած առարկան պետք է ինտեգրվի իր առարկայի հետ: Ուսուցիչները պարզում և որոշում են իրենց առարկաների համատեղ հետաքրքրությունը: Ինտեգրված դասի ամենախոցելի տեղը ուսուցիչների փոխգործունեության ճիշտ կազմակերպումն է. նրանցից յուրաքանչյուրի գործողությունների հաջորդականության ու ընթացքի արդյունավետ ապահովումը: Ընդ որում՝ նրանց փոխհարաբերությունները կարող են տարբեր լինել. յուրաքանչյուրն ունի հավասար մասնակցության իրավունք կամ նրանցից մեկը հանդես է գալիս որպես առաջատար, իսկ մյուսը՝ խորհրդատու, կամ ամբողջ դասը կարող է վարել ուսուցիչներից մեկը, իսկ մյուսները պարզապես խաղան ակտիվ հյուրի դեր: Տարբեր է նաև ինտեգրված դասերի տևողությունը: Բայց առավելագույնը օգտագործում են երկու կամ երեք դասաժամ՝ միավորված մեկ դասի մեջ:

Փուլ առ փուլ, քայլ առ քայլ ընթանում է դասը: Յուրաքանչյուր փուլ ցույց է տալիս՝ ինչպես ճիշտ օգտագործել ժամանակը: Իմ կարծիքով, պետք է կանխատեսել նաև բոլոր հնարավոր ընդհատումները՝ կապված տեսողական և բաժանվող նյութերի, սարքավորումների և քարտերի մուլտիմեդիայի ոստայնում: Բայց քանի որ աշխատում է երկու կամ ավելի դասավանդող, նույնիսկ, եթե ինչ-որ պահի առաջատար դեր խաղացել է նրանցից մեկը, երկրորդը չպետք է նստի ստվերում. նա ևս պետք է ակտիվ լինի՝ վերահսկի սովորողների աշխատանքը, օգնի կամ պատրաստվի հաջորդ փուլին: Դասի վերջում բոլոր սովորողները պետք է ինքնուրույն բացահայտեն այդ միջառարկայական կապը, նպատակը: Մեր նպատակն է սովորողին ուղղորդել, սովորեցնել հետազոտել, ստեղծագործել, որոնել, դասը յուրացնել հետաքրքիր ու ոչ ստիպողական մեթոդներով: Այսպիսով, ինտեգրված դասը դառնում է նաև գրավիչ դերախաղ, սեմինար, քննարկում, ոչ թե գիտելիքների ծավալի խցկում:

Ցանկացած ինտեգրված դաս նպատակ ունի դուրս գալու մեկ առարկայի նեղ շրջանակներից: Այսպիսի դասի կազմակերպմամբ կարելի է հաղթահարել խնդրի մակերեսային և ձևական ուսումնասիրությունը, ընդլայնել ինֆորմացիան, փոփոխել ուսումնասիրության շրջանակները, խորացնել հասկացողությունը, հստակեցնել հասկացություններն ու օրենքները, ընդհանրացնել թեման, միավորել սովորողների փորձն ու դրա ըմբռնման տեսական մասը, համակարգել ուսումնասիրված նյութը: Դասի ընթացքում կարելի է ինտեգրել մանկավարժական գործընթացի ցանկացած բաղադրիչ՝ նպատակ, բովանդակություն, ուսուցման մեթոդ և միջոց: Օրինակ՝ երբ վերցնում են բովանդակությունը, ապա ինտեգրման համար առանձնանցվում է բովանդակության ցանկացած բաղադրիչ՝ հասկացություն, օրենք, սահմանում, փաստ և այլն: Կարելի է ինտեգրել նաև բովանդակային այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են մտավոր և գործնական կարողություններն ու հմտությունները: Տարբեր առարկաներից վերցրած այս բաղադրիչները, որոնք միավորվում են մեկ դասի մեջ, կազմում են մեկ համակարգ, որի շուրջ հավաքվում և մի նոր համակարգ է դառնում ուսումնական նյութը: Համակարգ ձևավորելը դառնում է դասի կազմակերպման կարևորագույն մասը, քանի որ հիմք է հանդիսանում հետագայում մշակվող դասավանդման մեթոդիկայի և նրա կառուցման տեխնոլոգիայի համար: Որպեսզի ինտեգրվեն, այսինքն՝ ճիշտ ձևով միավորվեն ուսումնական գործընթացի բաղադրիչները, պետք է կատարվեն այնպիսի գործողություններ, որոնք ի սկզբանե ունեն ստեղծագործական բնույթ: Այս նախապատրաստական գործունեության ընթացքում ուսուցիչը որոշում է.

1. Ինտեգրված դասի անցկացման իր դրդապատճառներն ու նպատակը

2. Համակարգ ձևավորող բաղադրիչների մեջ առաջատարի և երկրորդականի առանձնացումը

3. Ինտեգրման ձևը

4. Միավորվող նյութերի միջև կապերի բնույթը

5. Նյութի հաջորդականության կառուցվածքը

6. Նյութի ներկայացման միջոցները

7. Դերերի բաշխումը ինտեգրվող առարկաների ուսուցիչների միջև

8. Տվյալ դասին սովորողների ուսուցման վերահսկման ձևերն ու տեսակները

Ինտեգրված դասն արդյունավետ անցկացնելու նախապայմաններից ամենակարևորը դասի ճիշտ պլանավորումն է, որի մեջ, ըստ չափորոշչի պահանջների, պետք է ներառվի նաև գնահատման համակարգը:

Ինտեգրված դասերը հաճախ ուղեկցվում են բացահայտումներով ու հայտնագործություններով, առաջ է գալիս ստեղծականությունը, հետազոտական աշխատանքը:

Բացի վերը նշվածից, այս տեսակի դասերը ստեղծագործ ուսուցչին հնարավորություն են տալիս հասնել նոր մակարդակի, բացահայտել իր համար տեղեկություններ, մտնել նոր փուլ, իսկ սովորողին՝ զարգացնել ստեղծագործական մտածողությունը, ինքնակրթվելու հնարավորություն ստեղծել: Ընդ որում, ուսումնական նյութերը պետք է լինեն մատչելի, ոչ ծանրաբեռնված, դասարանում ուսումնական գործընթացը պետք է համապատասանի սահմանային ծավալին: Սովորողը պետք է ստանա այնքան տեղեկություն, որ չխճճվի նյութերում:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԵՐԻ ԴԵՐՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Որպեսզի հասկանանք, թե ինտեգրված դասերը ինչպես են զարգացնում աշխարհայացքը, կարևոր է հասկանալ՝ թե ինչ է այն: Աշխարհայացքը մարդ-աշխարհ հարաբերությունների շրջանակներում աշխարհի մասին և այդ աշխարհում մարդու տեղի և դերի մասին առավել ընդհանուր հայացքների համակարգ է: Այն մարդու ընդհանրացված գիտելիքների, հայացքների, համոզմունքների, իդեալների, արժեքային կողմնորոշումների, ճանաչողության և գործունեության սկզբունքների միասնությունն է, որում արտահայտվում են բնության, հասարակության, մարդկանց նկատմամբ վերաբերմունքը, աշխարհի համընդհանուր ընկալումը, մարդու կենսական դիրքորոշումները, դրսևորումներն ու գործողությունները (Ասատրյան 2017:290): Ինչպես գրում է Յու.Ամիրջանյանը մարդու (աշակերտի) աշխարհայացքի ձևավորումը կախում ունի նրա անհատականությունից: Աշխարհայացքի ձևավորման մեջ մեծ դեր են կատարում աշակերտի ներքին բնությունը, տրամադրվածությունը, պատրաստակամությունը, առաջադրված նպատակին հասնելու վճռականությունը, որին նպաստում են կամքի ուժն ու համառությունը: Կամքը համոզմունքների ու զգացմունքների ամբողջականության մեջ աշակերտին մղում է հիմնավորված գործողությունների, արարքների (Ամիրջանյան 2005: 328): Պետք է նաև հաշվի առնել այն փաստը, որ սովորողների աշխարհայացքի ձևավորման համար մեծ նշանակություն ունի գործնական բաղադրիչը: Ինտեգրված դասը հնարավորություն է ընձեռում աշակերտներին սովորել առանց առարկայական սահմանափակումների: Ինտեգրված դասը առանձնանում է նրանով, որ կապված է ոչ միայն դպրոցական առարկաների, այլ նաև հասարակության, հասարակական կյանքի, մշակույթի, նորագույն տեխնոլոգիաների հետ: Ինտեգրված դասապրոցեսը հնարավորություն է տալիս աշակերտներին ձեռք բերել և օգտագործել գիտության տարբեր բնագավառների հիմնական գիտելիքներ՝ զարգացնելով արդյունավետ ուսումնառություն (Kelly 2001:553):

Կարելի է ենթադրել, որ ինտեգրված դասերը միտված են աշակերտի բազմակողմանի զարգացմանը: Քանի որ նմանատիպ դասերի ընթացքում աշակերտները պարբերաբար սկսում են կապ հաստատել տարբեր առարկաների, երևույթների, հասկացությունների միջև, նրանք սկսում են աշխարհը դիտարկել որպես մեկ ամբողջություն: Սրա շնորհիվ աշակերտները ստանում են աշխարհի հոլիստիկ՝ ամբողջական պատկերը: Ինքնին հոլիզմ հասկացությունը ենթադրում է, որ համակարգի բոլոր տարրերը՝ ֆիզիկական, կենսաբանական, սոցիալական կամ քաղաքական, միմյանց հետ փոխկապակցված են, ուստի պետք է գնահատվեն որպես ամբողջություն: Ներկայումս աշխարհում ավելի ու ավելի է տարածվում հոլիստիկ աշխարհընկալման ձևավորման անհրաժեշտությունը: (Stables 2010:3), իսկ ինտեգրված դասերը նպաստում են դրա զարգացմանը:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ԴԵՐԸ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Դյադյուշևա Լ. Պ. –ն իր հոդվածում նշում է, որ ինտեգրված դասը հանդիսանում է միջոց՝ հաղորդակցական հմտությունների զարգացման համար՝ օտար լեզուների դասավանդման շրջանակներում: Դպրոցի արդիականացման ընթացքում կրթության մեջ տեղի են ունենում մի շարք փոփոխություններ, որոնք ուղղված են աշակերտի ազատ դաստիարակությանը, ստեղծագործական հմտությունների զարգացմանը, ինքնահաստատմանը, ինքնուրույնության զարգացմանը, մրցակցայնությանը: Օտար լեզուների դասավանդման նպատակը հանդիսանում է հաղորդակցական կարողությունների ձևավորումը, ինչը զուգակցվում է սոցիալ-մշակութային գիտելիքների ձեռք բերմամբ, քանի որ անհնար է պատկերացնել հաղորդակցում առանց հաշվի առնելու սոցիալ-մշակութային առանձնահատկությունները: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ օտար լեզվի ուսուցման մեջ առանձնահատուկ տեղ է գրավում տվյալ ազգի մշակույթի ուսումնասիրությունը: Օտար լեզվի դասավանդումն ինքնին բարդ գործընթաց է և պահանջում է ժամանակ, քանի որ աշակերտը պետք է զարգացնի ունկնդրական, խոսակցական, ընթերցական և գրավոր մի շարք հմտություններ: (Дядюшева 2020:1) Մեթոդիստներ Ի.Լ. Բիմը և Մ.Զ. Բիբոլետովան գտնում էին, որ օտար լեզվի ուսուցումը ինտեգրված համակարգում ուղղված է աշակերտների բազմակողմանի զարգացմանը, նրանց ընդհանուր կրթությանը և դաստիարակությանը (սրան հնարավոր է հասնել տարբեր առարկաների ինտեգրման միջոցով): Այս պարագայում ինտեգրված դասերն օգնում են աշակերտի մոտ ձևավորել աշխարհի մեկ ամբողջական պատկեր, որտեղ օտար լեզուն համարվում է հաղորդակցման, աշխարհը ճանաչելու միջոց: Այդ նպատակի իրականացման համար ուսուցիչը ստեղծում է իրական կամ երևակայական իրավիճակներ, որտեղ խոսքի միջոցով աշակերտները հնարավորություն են ունենում զարգացնելու իրենց խոսքային հմտությունները: Օտար լեզուների դասն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով առանձնացվում և կիրառվում են

աշխատանքային տարբեր հնարներ, քանի որ դժվար է տիրապետել լեզվին՝ չգտնվելով այդ լեզվով խոսող երկրում:

ԻՆՏԵԳՐՎԱԾ ԴԱՍԻ ՊԼԱՆ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Առարկան՝ անգլերեն, աշխարհագրություն, ինֆորմատիկա

Դասարանը՝ 9-րդ

Դասի տիպը՝ նյութի ամփոփում և գիտելիքների ամրապնդում

Դասի թեման՝ Unit 4A “This is Australia”

Դասի նպատակը՝

● աշակերտների մեջ զարգացնել դպրոցական տարբեր առարկաների միջև կապ տեսնելու և այդ կապը գործնականում օգտագործելու կարողություններ ու հմտություններ

● բառապաշարի հարստացում

● զարգացնել աշակերտների բանավոր խոսքը, ստեղծագործական միտքը, լսողական հմտությունները:

Սովորողի ուսումնական ակնկալիքները.

- Ստանալ լրացուցիչ ինֆորմացիա ինչպես Ավստրալիայի, այնպես էլ մյուս մայրցամաքների, օվկիանոսների մասին
- Կարողանալ հասկանալ անգլերենով տրված հարցերն ու առաջադրանքները
- Կարողանալ կիրառել ՏՀՏ նորագույն ծրագրեր և կատարել առաջադրանքներ
- Լսել և հասկանալ մայրցամաքների, օվկիանոսների մասին տեսանյութը https://www.youtube.com/watch?v=zr4a0hgCEbY&t=102s/ և օգտվելով էլեկտրոնային գրատախտակից լուծել խաչբառը

Դասի կահավորումը՝ համակարգիչ, պրոյեկտոր և մեծ էկրան, էլեկտրոնային գրատախտակ, գլոբուս, քարտեզ

Դասի ընթացքը

● Բանավոր հարցում՝

1. Կազմակերպել «Մտագրոհ»՝ անդրադարձ կատարելով նախորդ դասի թեմայի վերաբերյալ աշակերտների ունեցած գիտելիքներին:

2.Աշխարհագրության ուսուցիչը ներկայացնում է տեղեկություններ Ավստրալիայի մասին, ցույց է տալիս այն քարտեզի և գլոբուսի վրա: Պատմում է Ավստրալիայի կլիմայի մասին:

3.Անգլերենի ուսուցչուհին անգլերենով հարցեր է հղում Հայաստանի կլիմայի մասին, կազմակերպում են քննարկում՝ համեմատելով Ավստրալիայի և Հայաստանի կլիմաները, գլոբուսի և քարտեզի վրա ցույց տալիս և բացատրում, թե ինչու են այդ երկու երկրների կլիմաները այդքան տարբեր:

2. Էլեկտրոնային գրատախտակի վրա Smart Notebook 11 համակարգչային ծրագրով կազմված առաջադրանքների միջոցով աշակերտները էլեկտրոնային գրչով համապատասխանեցնում են թեմային վերաբերող բառապաշարի հայերեն և անգլերեն տարբերակները:

● Դիտում են տեսանյութ մայրցամաքների և օվկիանոսների վերաբերյալ /անգլերենով/ https://www.youtube.com/watch?v=zr4a0hgCEbY&t=102s

●Անգլերենի ուսուցիչը հարցեր է տալիս տեսանյութի վերաբերյալ

● Առաջադրանքների կատարում՝ ստացած գիտելիքներն ամրապնդելու նպատակով լուծում են խաչբառ՝ օգտվելով էլեկտրոնային գրատախտակից

●Դասի ամփոփում՝ օգտվելով էլեկտրոնային գրատախտակից աշակերտները պատասխանում են թեմային վերաբերող հարցերին:

●Գնահատում՝ ամփոփիչ, ուսուցանող (լսել աշակերտների կարծիքն այն մասին, թե ինչ սովորեցին, ինչով էր այդ դասը տարբերվում մյուս դասերից, ինչը դուր եկավ, և ինչը հանդիսացավ խոչընդոտող հանգամանք): Վերջում աշակերտները նախօրոք պատրաստված ուսուցանող գնահատման սանդղակով կգնահատեն իրենց և կփակցնեն պաստառի վրա:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով ինչպես տեսանք ինտեգրված դասերը միտված են զարգացնելու ստեղծագործական, քննադատական մտածողությունը , դրանք նպաստում են ինքնակրթվելուն: Ելնելով սեփական փորձից հստակ կարող եմ ասել, որ աշակերտների զգալի մասը հավանում է ինտեգրված դասերը: Աշակերտներն ասում են, որ ինտեգրված դասերն ավելի հետաքրքիր են, նրանք չեն ձանձրանում, ինչպես ավանդական դասերի ժամանակ, ավելի հեշտ են ընկալում և մտապահում նյութը:

Ինտեգրված դասը աշակերտակենտրոն է, և այս դասի առավելությունը գերակշռում է այն խոչընդոտներին, որոնք հանդիպում են նախապատրաստական փուլում:

Ինտեգրված դասի արդյունքում սովորողը, ոչ ստիպողաբար, տանը կատարում է առաջադրանքներ, հետազոտում է, ապա ներկայացնում դպրոցում,որը խրախուսվում է: Այստեղ սովորողին չես պարտադրում կատարել, նա այն անում է ինքնակամ, հաճույքով:

Ինտեգրացված դասերը հզոր խթան են հանդիսանում սովորողի հոգեկան գործունեության մեջ: Սովորողները սկսում են վերլուծել, համեմատել, որոնել երկու օբյեկտների ու երևույթների միջև կապը: Այն հոգնածությունը, ձանձրույթը, որը սովորողների մոտ նկատվում է միանման դասից, վերանում է, այս դեպքում դասը առաջացնում է հետաքրքրություն, աշխուժություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. ՀՀ կրթության բարելավման ծրագրի օտար լեզուների ուսումնական բնագավառի հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքները և օրինակելի ծրագրերը (անգլերեն, գերմաներեն, ռուսերեն, ֆրանսերեն), Երևան 2020:
2. . Արշակյան Ս.Ժ., Միջառարկայական կապերը տեխնոլոգիայի դասաժամին, Երևան 2014:
3. Ամիրջանյան Յ.Ա., Սահակյան Ա., Ս., Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ). Երևան 2005:
4. Ասատրյան Մ. Վ., Փիլիսոփայության (ուսումնական ձեռնարկ) ներածություն Երևան 2004:
5. Աստվածատրյան Մ., Արնաուդյան Ա., Վարդումյան Ս., Օհանովա Ի, Պետրոսյան Ռ., Երեմյան Լ., Ինտեգրված թեմատիկ միավորներ (տարրական դպրոցի ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման ձեռնարկ), Երևան 2005
6. Դավթյան Մ., Գրիգորյան Ք., Արնաուդյան Ա., Զոհրաբյան., Հովհաննիսյան Գ., Օհանովա Ի., Կրթակարգի մշակման և ինտեգրման մոտեցումներ (Ձեռնարկ ուսուցրիչների համար), Երևան 2007:
7. https://old-lib.armedu.am/resource/46751
8. https://multiurok.ru/files/integrvats-das-ew-dasi-plan.html
9. https://vsu.am/grqer/2017/aprak/pnjoyantatevik.pdf
10. https://brusov.am/website/documentation/files/1bdbe63f.pdf